## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2018թվականի ապրիլի 13-ին տեղի ունեցավ Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 5-րդ «Բ» դասարանի հերթական ծողական ժողովը: Ժողովին մասնակցում էին 22 ծնող և դասղեկ Ար. Մուրադյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Դասերից դուրս աշակերտների զբաղվածության հարցը:
2. Սարդարապատ էքսկուրսիա կազմակերպելու հարցը:
3. Շաբաթօրյակի կազմակերպման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին.**- Դասարանի աշակերտների զբաղվածությունը դասերից դուրս հարցը:

Ելույթ ունեցան դասղեկը և ծնողական խորհրդի նախագահը: Երկուսն էլ հաստատեցին, որ սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում մեծ է երեխային ուսման մեջ աջակցելու և դպրոցից դուրս նրա օրվա մնացած ժամերի զբաղվածությունը ճիշտ կազմակերպելու դերը, որովհետև նրանց ամենօրյա անմիջական հսկողությունից և ծնողական պարտքի զգացումից է կախված աշակերտի՝ ուսման նկատմամբ պատասխանատվությունը, օրվա ռեժիմի ճիշտ կարգավորումը:

Սխալ է, որ միայն մայրն է ներկայանում ծնողական ժողովներին և երեխայի ուսման ու դաստիարակության ողջ պատասխանատվությունը միայնակ կրում:

Օրվա ընթացքում երեխան բացի դաս սովորելուց պետք է կատարի լրացուցիչ հանձնարարություն, գրաղվի հանրօգուտ աշխատանքով, գիրք կարդա, օգնի ծնողներին տնային գործերում:

Դասղեկը հորդորեց ծնողներին ճիշտ կազմակերպել սովորողի ազատ ժամանակը. չէ որ դպրոցից հետո ողջ ժամանակահատվածում նրանք գտնվում են ծնողների կողքին:

**Որոշեցին**- Ուժեղացնել դասղեկի և ծնողների միասնական հսկողությունը, աշակերտների դասերից դուրս զբաղվածության և դասապատրաստվելու հարցում:

**2.Լսեցին.** - Սարդարապատ էքսկուրսիա կազմակերպելու հարցը:

Դասղեկ Ար. Մուրադյանը առաջարկեց էքսկուրսիա կազմակերպել դեպի Սարդարապատ, քանի որ այս տարի լրանում է ՀՀ առաջին հանրապետության 100-ամյակը: Դա դարի պատմական իրադարձություններից մեկն է: Հայ ժողովուրդը պատրաստվում է մեծ շուքով նշել իր պատմական հաղթանակի տարեդարձը և մենք ևս հավուր պատշաճի պետք է այցելենք հուշահամալիր, որպեսզի աշակերտները իրենց աչքով տեսնեն հուշարձանի վեհությունը և հասկանալ տեղի թանգարանի արժեքավոր իրերի խորհուրդը:

Որոշեցին. - Ծնողական խորհրդի անմիջական աջակցությամբ կազմակերպել և իրականացնել այդ ուղևորությունը: Կազմակերպչական հարցերը լուծել բոլոր ծնողների մասնակցությամբ, հավաքել 5000 դրամ՝ սննդի, տրանսպորտի և թանգարանի մուտքի տոմսերի համար:

3.Լսեցին. - Շաբաթօրյակի կազմակերպման հարցը:

Դաստեկ Ար. Մուրադյանը նշեց, որ ապրիլի 14-ին տեղի է ունենալու համադպրոցական շաբաթօրյակ, որին պետք է մասնակցեն բոլոր սովորողները, կազմակերպեն և իրականացնեն համապատասխան աշխատանքներ. պետք է մաքրեն դասասենյակը, դպրոցի բակը:

Որոշեցին.

Ապահովել աշակերտների մասնակցությունը շաբաթօրյակի աշխատանքներին, լավագույներին խրախուսել:

4.Լսեցին.- Ընթացիկ հարցեր:

Դաստեկ Ար. Մուրադյանը խոսեց ընկերասիրության, ընկերների հետ շփվելու, նրանց վարքագծի հետ կապված որոշ հարցերի շուրջ: Նա տեղեկացրեց, որ մի քանի աշակերտներ/ Հակոբյան Վարուժան, Ղազարյան Վաչագան, Բաղալյան Հովնան/ իրենց թույլ են տալիս այնպիսի բառեր արտասանել, որոնք խանգարում են նաև աշակերտների շրջանում առողջ շփմանը: Հետևաբար պետք է ուշադիր հետևել նրանց խոսակցական լեզվին՝ թույլ չտալով շրջապատում լսած որոշ բառեր օգտագործել դպրոցում:

Որոշեցին.

Առավել ուշադիր լինել աշակերտների բառապաշարին և թույլ չտալ նման արտահայտություններ անել, չէ որ դա հայի հայեցի դաստիարակման, կիրթ և մեծահոգի, ընկերասեր հայ լինելուն է խանգարում: Պետք է ավելի շատ զբաղվել ընկերասիրության թեմաներով:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Հրանուշ Ավագյան

Քարտուղար՝ Տաթևիկ Աբրահամյան